

# ԵՐԱՆԻ ՆՐԱՆՑ, ՈՐ ՀԵԶ ԵՆ ԵՎ ԽՈՆԱՐՀ (ՔԱՐՈԶ)

«Որ կամիցի ի ձէնջ մեծ լինել՝ եղիցի ձեր պաշտօնեայ, և որ կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ» (Մտթ. Ի 26—27):

Սիրելի հավատացյալներ,

Հետ Հարության 40-օրյա շրջանն է: Մի քանի շաբաթներ առաջ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին տոնախմբեց քրիստոնեական մեծագույն տոնը՝ Զատիկը՝ Քրիստոսի Հրաշափառ Հարության ավետիսը կըրկին ու կրկին ավետելով իր աշխարհասփյուռ զավակներին: Բացենք մեր հոգու դռները հարուցյալ Տիրոջը ներառնելու և նրա օգնությամբ շարունակելու մեր կյանքի ընթացքը: Իսկ ապրել հարուցյալ Քրիստոսի հետ պիտի նշանակեր ընթանալ նրա նախանշած ճանապարհով, պիտի նշանակեր ապրել նրա պատվիրաններով: Բպում են Քրիստոսի պատվիրանները, քրիստոնեական առաքինությունները, և այդ առաքինությանց մեջ կարևորագույններից է խոնարհությունը: Այսօր մեր նպատակն է խոսել ձեզ խոնարհության մասին:

Քրիստոս Իր առաքելության ընթացքում բազմաթիվ առիթներով թե՛ ի տես Իր աշակերտների, թե՛ Իրեն հետևող ժողովրդի, խոսել է խոնարհության մասին, մատնանշել նրա անհրաժեշտությունը ինչպես երկրային կյանքում, այնպես էլ երկնային անմահության հասնելու համար: Հիշենք թեկուզ փարիսեցու և մաքսավորի առակը: Այս երկու մարդիկ էլ տաճար էին եկել աղոթելու Տիրոջը, գոհություն մատուցելու Նրան: Բայց այլ էր նրանցից յուրաքանչյուրի մտադրությունը: Առաջինը տաճար էր մտել ի լուր ամենքի իր անձը բարձրացնելու, մինչդեռ մաքսավորը մեկուսի կանգնած, լուռ, գլխիկոր ու ամոթահար աղոթում էր. «Աստուած քաւեա զիս զմեղաւորս»: Ի պատասխան այս երկուսի աղոթքի լսվում է Աստուծո Միածին Որդու խոսքը. «Ասում եմ ձեզ, սա (մաքսավորը) իջավ իր տունը արդարացած, ոչ թե մյուսը, որովհետև ով որ բարձրացնում է իր անձը՝ կխոնարհվի, և ով որ խոնարհեցնում է իր անձը՝ կբարձրացվի» (Ղուկ. ԺԸ 14):

Հասել էր Քրիստոսի երկրային առաքելության ավարտը, Նա վերջին պատվիրաններն էր տալիս առաքյալներին ու ժողովրդին: Եվ կրկին անդրադառնում է խոնարհությանը. «Ձեզանից ով կամենա մեծ լինել, ձեր սպասավորը թող լինի, և ով կամենա առաջինը լինել, ձեր ծառան թող լինի»: Այս խոսքերը ասվում են իբրև պատասխան՝ Իր երկու աշակերտների՝ Զեբեթիայի որդիներ Հակոբոսի և Հովհաննեսի խնդրանքի, որոնք հայցում էին Քրիստոսից արքայության մեջ նստել Նրա աջ և ձախ կողմերում, այսինքն՝ արժանանալ Նրա շնորհին: Ձենք ուզում մեղադրել երկու առաքյալներին, քանզի նրանք դեռևս չէին լուսավորված Հարության լույսով, նրանց համար Քրիստոսի գաղափարներն ու վարդապետությունը կիսով չափ դեռ մութ էին ու անհասկանալի: Իսկ հետ Հարության նրանք երկուսն էլ, թե՛ Հովհաննեսը և թե՛ Հակոբոսը՝ ողողված Հարության լույսով, նահատակվեցին «Վասն Յիսուսի»:

Թերթենք քրիստոնեական պատմության էջերը՝ սկսած նրա սկզբնավորումից մինչև մեր օրերը: Ինչպե՞ս հիմք դրվեց քրիստոնեության: Նրա հիմնադիրը, որ Աստուծո Միածին Որդին էր, խոնարհվեց իր Աստվածային բարձունքներից, զգեցավ մարդկային կերպարանք, մարդկության մեղքերի տակ կքած բարձրացավ Գողգոթան ի վեր, անարգվեց ու խաչվեց խավարասեր մարդկության կողմից՝ ընդունելով իր ժամանակի

ամենաանարգ մահը: Ու Նրա մահով և ապա Հրաշափառ Հարությամբ հիմք դրվեց մի նոր կյանքի, նոր կրոնի:

Ինչպե՞ս տարածվեց քրիստոնեությունը Հռոմեական կայսրության մեջ և նրա սահմաններից դուրս: Առաքյալներն ու նրանց հետևող ժողովուրդը կարողացան իրենց խոնարհությամբ ու հաստատակամությամբ կոտրել հռոմեական բիրտ կայսրերի համառությունը: Նրանք խոնարհվեցին Ներոնների, Դիոկղետիանոսների և այլոց դաժան ու անմարդկային հալածանքների ու կանգվածային հաշվեհարդարների տակ, բայց նրանց դաժանությունն իսկ չկարողացավ սասանել նորադարձ քրիստոնյաների հավատը, չկարողացավ արգելափակել Լույսի ու Ճշմարտության ճանապարհը:

Ինչպե՞ս տարածվեց քրիստոնեությունը Հայաստան աշխարհից ներս: Նախ՝ հեղվեց Քրիստոսի երկու առաքյալների՝ Թադեոսի և Բարթուղիմեոսի սուրբ արյունը՝ բազմաթիվ այլ հավատացյալների հետ, և ապա Սուրբ Գրիգոր Լուսավորիչը իր չարչարանքներով ու անսասան հավատքով համոզեց հայոց Տրդատ թագավորին, որ ինքն է քարոզիչը Ճշմարտության ու Լույսի:

Եվ այսպես աստիճանաբար, քրիստոնեությունը ի գին բազմաթիվ վկաների խոնարհության ու մարտիրոսության ծավալվեց աշխարհի չորս ծագերը, Աստվածային խոսքը ավետվեց ի լուր ամենքի և ամենուր: Հետագա քրիստոնյա սերունդները սրբացրին նրանց, ում արյունը հեղվեց ի սպաս Քրիստոսի Ավետարանի:

«Նա, ով խոնարհեցնում է իր անձը, կբարձրանա»:

Սիրելի հավատացյալներ,

Պատմությունը մեզ բազում օրինակներ է տալիս՝ վկայելու Քրիստոսի խոսքերի հավիտենական ճշմարտությունը: Հայ ժողովուրդը իր դարավոր պատմության ընթացքում բազում-բազում վավակներ է ծնել, որոնք այսօր մեզ համար մեծեր են: Մեծեր են իրենց սրբակենցաղ կյանքով, մեծեր են իրենց կատարած գործերով: Հայ ժողովուրդը ծնել է Վարդան ու Վահան, Մաշտոց ու Սահակ, Նարեկացի ու Շնորհալի և բազում ու բազում ուրիշներ, որոնք անմահացել են մեր ժողովրդի սրտում, որոնք այժմ էլ ապրում են յուրաքանչյուր հայի հոգում: Բայց նրանք անմահացել են, ոչ թե որովհետև ձգտել են անմահության, ոչ թե որովհետև գերմարդկային բնություններ ու էակներ են եղել, այլ որովհետև նրանցից յուրաքանչյուրը իր հոգով ու էությամբ, խոնարհելով իր անձը, ծառայել է ու սպասավորել իր ազգին, անձնականն ու մարմնականը լռեցրել ի շահ հանրության ու ժողովրդի:

Մաշտոցը հայոց տառերն էր երկնում ոչ թե փառքի ու անմահության, այլ իր ժողովրդի ազգային ինքնության պահպանման ու գոյատևման համար:

Վարդանն Ավարայրի դաշտում կռվեց ու թափեց իր սուրբ արյունը ոչ թե փառքի ու անմահության համար, այլ որպեսզի իր ժողովուրդը չստրկացվեր մարմնապես ու հոգեպես:

Նարեկացին մութ քարայրներում, մենության մեջ «ի խորոց սրտի խոսքն» էր առաքում առ Աստված, մարդկային մտքի մեծագույն թռիչքն էր արարում, մարդկային հոգին մերձեցնելու աստվածային բարձունքներին, մաքրելու և անաղարտ պահելու այդ հոգին մեղքից ու աղտեղությունից: Բյուրավոր են օրինակներն այս. «Հաւատք առանց գործոց մեռեալ են առանձինն»: «Մարդու ամբարտավանությունը կկործանի նրան, բայց հեզահոգին փառք կստանա» (Առակ. ԻԹ 23):

Երանի նրանց, որ հեզ են ու խոնարհ, որովհետև նրանք երկնքի արքայությունը պիտի ժառանգեն: Ամեն:

ՌԱԶՄԻԿ ՍՐԿ. ԻՍԱԽԱՆՅԱՆ